ՎԱՉԳԵՆ ՇՈՒՇԱՆՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գ. Ա. ԳԱԼՍՏՅԱՆ

Հայտնի է, որ սփյուռքահայ կյանքի առաջին տասնամյակներին զորեղ էր արևմտահայ բնաշխարհի հաճախանքը սփյուռքի գրականության մեջ։ Ոմանք քննադատել են արևմտահայ գյուղի պատկերումը և կոչ են արել դրա փոխարեն արտացոլել նոր՝ սփյուռքահայ իրականությունը[1]։ Ամենևին չանտեսելով սփյուռքահայ կյանքի գեղագիտական յուրացման կարևորությունը, կարծում ենք, այդ քննադատները անտեսել են այն հանգամանքը, որ արևմտահայ գյուղի պատկերումը միանգամայն օրինաչափ ու բնական էր և բոլորովին էլ արևմտահայ գյուղագրության պարզ «երկարաձգումը» չէր, այլ նոր երևույթ, քանի որ կորսված բնաշխարհը դիտվում էր սփյուռքահայի՝ կորուստ ունեցողի, օտարության մեջ անհայրենիք մնացած մարդու աչքերով։ Այն, որ սփյուռքահայ գյուղագրությունը ժամանակավրեպ չէր և թելադրված էր ներկայի՝ սփյուռքի իդեալների դիրքերից, ոչ մի սփյուռքահայ գրողի ստեղծագործության մեջ այնքան հստակորեն չի երևում, որքան Վալգեն Շուշանյանի։

Անցյալի ու ներկայի զուգահեռ պատկերումը, նրանց միասնությունն ու հակադրությունը տեսանելի են Շուշանյանի երկերում։ Համաստեղի, Մնձուրու և այլոց ստեղծագործություններում թեև անցյալի պատկերը իր բնույթով նոր, սփյուռքահայ իրականության ու հոգեվիճակի արդյունք է, բայց հազվադեպ է պարզորոշ երևում այդ կապը, այնինչ Շուշանյանը ոչ միայն ուղղակի կամուրջ է գցում այդ երկու իրականությունների միջև, այլև մատնանշում է անցյալին անդրադառնալու այն հիմքերը, որ տալիս է ներկան։ Նա գրում է. «Հիմա, երբ բոլորին պես ես ալ ստիպված եմ լուրջ ու խոհուն երիտասարդ մը դառնալ, երբ ապագան իմ ուսերուս ալ կճնշե ու կապառե ուրախությունս... օրը՝ տղմոտ ու տրտմաբեկ, գիշերը՝ խուլ ու ցավատանջ... երբ կճանչնամ, ափսոս, ամեն հաճույք իր տգեղ ու զզվելի մերկության մեջ... կհիշեմ անցյալը պայծառ ու լուսաշողշող»[2]։

Եթե սփյուռքահայ գրողների մի շարք երկերում տեսնում ենք անցյալի՝ կործանված արևմտահայ գյուղի պատկերը, իսկ մի շարք երկերում էլ՝ ներկայի՝ սփյուռքահայ կյանքի պատկերը, ապա Շուշանյանը հաճախ միևնույն երկում, ներկայանում է սփյուռքահայ գրականության այս երկու հիմնական թեմաների միասնությամբ։ Հենց այդ յուրահատկության շնորհիվ էլ նրա ստեղծագործությունը կարող է ծառայել որպես սփյուռքի գյուղագրության՝

---

1 Զ. Եսայան, Խորհրդային Հայաստանի պրոլետ-գրողներու կոչին առթիվ («Երևան», Փարիզ, 1925, № 19, էջ 2), Ա. Անդրեասյան, Խոհեր, Պեյրութ, 1961, էջ 7—27, Կ. Զարյան, Ազգայինն ու միջազգայինը գրականության մեջ («Զվարթնոց», Փարիզ, 1929, № 3, էջ 107)։

2 Վ. Շուշանյան, Սիրո և արկածի տղաքը, Պեյրութ, 1957, էջ 8։

սիյուրքահայ կյանքի խնդիրներից կտրված լինելու մտայնության հերքման լավագույն օրինակ։

Դժգոհելով ներկայից, Վ. Նուշանյանը չի բավարարվում սոսկ անցյալի հուշերը վկայակոչելով։ Նրա հերոսը դժվարանում է հենակետեր գտնել ներկա իրականության մեջ։ Այստեղից էլ՝ անցյալի երազանքը, իրականությունից բարձրանալու ճիգը։ Այս հարցում Նուշանյանը հիմնականում նման է Համաստեղին, Հ. Մնձուրուն, Բ. Նուրիկյանին և մյուսներին։ Սակայն Նուշանյանի հերոսը՝ իր հայացքը ուղղում է նաև ապագային, փորձում է ոչ միայն անցյալում, այլև ներկայի մեջ գտնել խանդավառվելու արժանի բան և որոնումների ընթացքում հանդում է հեղափոխության գաղափարին։ Իհարկե, հեղափոխությունը նրա համար միայն երազանք է, իրականությունից դժգոհ մարդու հայացք, որ կանգ է առնում այդ գաղափարի վրա։ Բայց դա միայն անցյալի լուսավոր հիշատակների ոգեկոչմամբ չբավարարվելու և ներկայից բարձրանալու, այն սրբագրելու իրական ուղիների որոնման ապացույց է.

Կմտածեմ հեղափոխության մը, որ արյան ալիքներու մեջ
Պիտի քշե տանի այս իրավակարգը, բանվորներ ու գյուղացիներ
Պիտի տիրեն այս երկնակարկառ շենքերուն...[3]

Հեղափոխության դերը՝ որպես իրականությունը փոխելու միջոց նշելիս, չի կարելի մոռանալ Վ. Նուշանյանի ստեղծագործությանը բնորոշ մեկ այլ գիծ՝ զորավոր պոռթկումն ու արգահատանքը ընդդեմ քաղքենիության։ Եվ հատկանշական է, որ գրողը երջանկության քաղքենիական ըմբռնմանը հակադրում է իսկական, մեծ սերն ու երիտասարդ, չծերացող հոգու հարբստությունը։

Կորցրած բնաշխարհի մասին գրողներին բնորոշ է իդեալի միասնություն, այն է՝ հայրենի հողի վրա ապրելու և աշխատելու իղձը։ Սակայն այս դեպքում էլ Վ. Նուշանյանի ստեղծագործությունն ունի այդ իդեալի մարմնավորման առանձնահատկություններ։ Այսպես, դժգոհությունը ներկայից և ծննդավայրի նկատմամբ սերն արտահայտվում են առավելապես նրա սիրերգության միջոցով, իդեալը բեկվում է սիրո հարցի մեջ և սիրերգությունը ստանում է ենթիմաստ, հայրենասիրական խոր բովանդակություն։ Նուշանյանը խոր ու անաղարտ սիրո երազողն է և այդպիսի սեր տեսնում է բնաշխարհում, ուր կապիտալիզմը դեռ չի հասցրել եղծել մարդուն, իսկ բուրժուական մեծ քաղաքում տեսնում է մարդկային այդ խորունկ զգացմունքի առուծախի առարկա դառնալը։ Երբ գրողը նկարագրում է ծննդավայրի սերը, նա ընդգծում է այն՝ որպես մեծ ու տառապալից ապրում, շեշտում սիրահարների արժանապատվությունն ու ինքնասիրությունը, սիրո զգացմունքը դիտում որպես բնաշխարհի մարդու հոգեկան հարստությունների ցուցանիշ։ Օրինակ, «Օրերը գեղեցիկ չեն» վեպի հերոսին՝ Ծուռ Կարապետին, անհաս սիրո տառապանքը նույնիսկ դուրս է բերում հավասարակշռությունից, մղում պոռնկատուն։ Բայց դրանով էլ Նուշանյանն իր հերոսին կանգնեցնում է մեծ փորձու-

---

3 Վ. Նուշանյան, Երկեր հիշատակաց, Երևան, 1956, էջ 423։

թյան առջև և պատվով դուրս բերում այդ փորձությունից, այդպիսով, ավելի ընդգծելով բնաշխարհի մարդու բարոյական ուժն ու մաքրությունը։ Հերոսի մեջ հաղթում է ինքնասիրությունը, և նա հեռանում է գայթակղության վայրից։ Իսկ ժամանակի եվրոպական մեծ քաղաքում իսկական սիրո փոխարեն՝ կինը պատկերված է որպես ժամանցի առարկա։ Սա է պատճառը, որ ոմանք նույնիսկ անպարկեշտություն տեսան նման պատկերների մեջ, անտեսելով սակայն, հեղինակի դիտակետը, նրա վերաբերմունքը այդ պատկերների նկատմամբ։ Գնովի սերը, ցոփությունը ամենևին էլ Շուշանյանի իդեալը չէ, ընդհակառակը, գրողն իսկական սիրո գաղափարի դիրքերից է պատկերում այդ բոլորը և շատ հաճախ ուղղակի թախծի, հուսահատության ու ցավի տրրամադրությամբ է համակվում.

Կգտնես աղջիկ մը գինով՝
Լկտի ու աներազ

. . . . . .

Հապա վա՞ղը... երեկվան պես
Միշտ ցրտին ու ցավոտ[4]։

Այսպիսով, սիրո թեման դառնում է ներկայի ու անցյալի նկատմամբ տրամագծորեն հակադիր գնահատական ու վերաբերմունք արտահայտելու միջոց։ Շուշանյանի ստեղծագործության մեջ սիրո հարցի իմաստավորման այս առանձնահատկությանը զուգընթաց է մի այլ, ոչ պակաս հետաքրքիր յուրահատկություն։ Սփյուռքահայ գրականության մեջ նկատելի է հեթանոսական աստվածների ոգեկոչումը՝ ի հակակշիռ օտար ափերում հայ ոգու թուլացման, որպես հայրենականը, ազգայինն ընդգծելու միտում։ Շուշանյանի «Գարնանային» վեպում ևս դա կա, բայց հեթանոսականը կապվում է դարձյալ սիրերգությանը։ Հեթանոսական սիրո երազանքով գրողը հակադրվում է բուրժուական աշխարհի կեղծ, անբնական, գնովի սիրուն։ Սա Շուշանյանին զգալիորեն մերձեցնում է Դ. Վարուժանին, միայն այն տարբերությամբ, որ Վարուժանի «Հարճը» պոեմում և մի շարք բանաստեղծություններում հեթանոսական սերը ստացել է շոշափելի պատկեր, իսկ «Գարնանայինում» այն սոսկ երազանք է, հերոսի նամակներում արտահայտված իղձ։

Այսպիսով, ներկայից ունեցած դժգոհության հողի վրա Շուշանյանը տարբեր ձևերով է հակադրվում իրականությանը՝ անցյալի լուսավոր հիշատակներով, հեթանոսական սիրո առասպելով ու հեղափոխության երազանքով։ Ըստ որում՝ գրեթե ամեն ինչ ասվում է սիրերգության մեջ ու դրա միջոցով։ Սրանք հիմնականում այն թեմատիկ-գաղափարական առանձնահատկություններն են, որոնցով Վ. Շուշանյանի ստեղծագործությունը ընդգծվում է սփյուռքահայ արձակի ֆոնի վրա։ Սակայն ոչ սակավ առանձնահատկություններ է ի հայտ բերում Շուշանյանն արտահայտչաձևի առումով, մասնավորապես՝ իրականության արտացոլման սկզբունքով։ Նրա ստեղծագործություններում ամենից առաջ աչքի է զարնում կերպարի կերտման առանձնահատկությունը։ Հերոսները հաճախ կերպավորվում են հուշի միջոցով, հուշե-

---

4 «Հայրենիք», 1923, № 2, էջ 17։

րի հոսքի մեջ։ Հերոսին դիմորոշում են տպավորությունները, որոնց միջոցով նա ստանում է իր բնավորությունը։ Օրինակ, «Օրերը գեղեցիկ չեն» վեպում կիրառված է կերպավորման հետաքրքիր ձև. հեղինակն ասելիքը կենտրոնացնում է մերթ այս, մերթ այն հերոսի շուրջը, կյանքը պատկերում է մերթ այս, մերթ այն հերոսի ընկալմամբ, նրա հուշերի, տպավորությունների միջոցով։ Այդպես են ամբողջանում Ծուռ Կարապետի, Արշալույսի կերպարները։ Կան որոշ կերպարներ, որոնք մարմնավորվում են միայն հեղինակի կամ գլխավոր հերոսի հուշերի շնորհիվ, և այդ դեպքում կերպարների մեջ շատ բան որոշում է հիշողի հոգեվիճակը, տրամադրությունը։ Այդպիսիք են Շուշանյանի հարազատների՝ մոր, հոր, քրոջ կերպարները, որոնք պատահական չէ, որ տրվում են հիշողի սուբյեկտիվ ընկալմամբ։ Պարզ է, որ եթե սփյուռքահայն է վերհիշում հարազատներին, ապա նրանց կերպարները պիտի հագենան զգայական երանգներով։ Շուշանյանի կերպարներն այդպիսիք են։ Նա դրականություն բերեց գերզգայուն հերոսի տիպը, և հենց իր ողջ ստեղծագործությունն էլ ունի շեշտված կերպով զգայական բնույթ։ Այս առումով ևս Շուշանյանը անզուգական է սփյուռքի գրականության մեջ։ Այստեղ գրողի խառնվածքը չէ միայն որոշողը. ժողովրդի տխուր ճակատագիրը այդ ժողովրդի զավակի կողմից չէր կարող պաղարյուն մարմնավորում ստանալ։ Շուշանյանի հերոսները սովորաբար կրքոտ են, երազող, հպարտ, հաճախ մի հայացքը, մի բառը բավական է, որ նրանք սարսռան, արտասվեն կամ հառաչեն։ Եվ գրողի երկերի մեծ մասում դա սենտիմենտալ չի հնչում, որովհետև այդ հերոսների հոգու միջով անցնում է իրենց ժողովրդի ողբերգությունը։

Շուշանյանի ստեղծագործության մեջ դարի ու սերնդի պատմությունը տրվում է որպես հերոսի հոգու կենսագրություն։ Ոչ այնքան աշխարհի իրադարձությունները, որքան նրանց բեկումը հերոսի ներաշխարհում, նրանց վերապրումը, հոգեկան հակազդեցությունը, գործողություն-պատկերի փոխարեն գերակշռում է զգացմունք-պատկերը, քնարականությունը։ Ահա սա է Շուշանյանի գեղարվեստական արտացոլման հիմնական յուրահատկությունը։ Դեպքերի և իրադարձությունների պատկերումը հեղինակի հիմնական ասելիքը չէ։ Եթե փորձենք ընթերցել Շուշանյանի երկերից հատվածներ, որոնցում խոսվում է հերոսների արտաքին շարժումների մասին, ապա այդ մասերից ամենևին չենք զգա Շուշանյանի տաղանդի ուժն ու հմայքը։ Այնինչ, եթե վերցնենք միայն հուշերը, զեղումները, տպավորությունները, մի խոսքով՝ ներաշխարհի պատկերները, ապա երկը կորցնելով շատ բան, այնուամենայնիվ, հիմնականում ճիշտ պատկերացում կտա գրողի տաղանդի մասին, ճանաչելի դարձնելով արվեստագետի ինքնատիպ ձեռագիրը։ Շուշանյանի երկերի գործողությունը սովորաբար հարուստ չէ, մի քանի բառով կարելի է վերապատմել այն։ Այնինչ, պարզապես անհնար է վերապատմել հոգեկան լիցքը, հերոսի հոգու նրբագծերը, կենդանի ապրումների հորձանքը։ Այնքան տիրական է հոգեկան պարպումը, որ հաճախ ընթերցողն ուշադրություն էլ չի դարձնում, որ գործողությունը սլացիկ չէ, կան կրկնություններ և այլն։

Իրականության արտացոլման այս գիծը պայմանավորում է մի այլ յուրահատկություն. սփյուռքահայ գրականության մեջ Շուշանյանը ամենաքնարական կերպարներ կերտողն է։ Նրա հերոսները պարզապես բանաստեղծներ են։ Հեղինակն իր հոգուց, իր ճակատագրից շատ բան ուղղակի դնում է նրանց

մեջ, իր և հերոսների ներաշխարհի միջև, առավել, քան մեկ ուրիշ հայ գրող, վերացնում է սահմանները, իր էությամբ, իր կարոտներով պարպվում նրանց մեջ։

Վ. Շուշանյանը գրել է և՛ արձակ, և՛ չափածո, բայց, կարելի է ասել, որ նա սփյուռքի ամենամեծ քնարերգուն է՝ իր արձակով։ Քնարական նուրբ ու խոր էշեր շատ կան Շուշանյանի երկերում, սակայն մի առանձին հմայք ունեն տեղահանության ու տարագրության թոհուբոհում զոհված իր քրոջ մասին գրած հատվածները. «...գո՛ւն, որ ինկար անապատի չար հողին վրա, ինչպես անուշ աչքերով վիթ մը կիյնա որսորդին գնդակեն... Դո՛ւն, չորս մեռելներուս ամենե՛ն պզտիկը ու սիրելին, ամենեն գեղեցիկը ու փխրունը, աղվոր ու պզտիկ ծաղիկի մը նման, դո՛ւն՝ աղշիկ մը սպիտակ հարսանեկան շուշաններու փունջի մը պես, ծաղկած երաշ խոլ խավարին մեջ, քո՛ւյր...»։ Քրոջ կերպարը այնքան է հուզել գրողին, որ դարձել է իր կարոտների կիզակետը, և նրա մեջ դրված հուզական մեծ լիցքի շնորհիվ այն դառնում է բոլոր ան-մեղ զոհերի կորստյան վշտի խտացումը։ Այստեղ Շուշանյանն իր անձնական վշտի զեղման ճանապարհով հասնում է մի ամբողջ սերնդի ճակատագրի ընդհանրացման։ Արևմտահայի ուղին՝ հայրենիքում ապրած սիրո, թախծի ու խինդի օրերից մինչև տեղահանության օրերը, մինչև նրա կյանքն օտար ափերում — այս ամենը կա Շուշանյանի ստեղծագործության մեջ, միայն այն առանձնահատկությամբ, որ դարի պատմությունը տրվում է որպես հոգու կենսագրություն, որը հենց նրա երկերի ներքին սյուժեն է և ներաշխարհի այդ պատմությունը կարելի է լրիվ ընկալել միայն այն դեպքում, եթե աչքի առջև ունենանք գրողի ողջ գրական ժառանգությունը։ Շուշանյանի ամեն մի երկ իր տեղն ունի հերոսի հոգու պատմության շղթայում։ Օրինակ, «Մթին պատանություն» երկը գրողի ողջ ստեղծագործությունն ընդգրկող ներքին սյուժեի օղակներից մեկն է. դա այն պահն է, երբ հերոսը նոր է կորցրել հայրենի տունն ու հարազատներին, տակավին թարմ է վերքը, միաժամանակ, հերոսն ապրում է հոգեբանական անցման՝ սփյուռքահայի հոգեբանության ձևավորման պրոցես, որն ուղեկցվում է ներքին ցնցումներով։

Շուշանյանի երկերը փոխադարձաբար լրացնում են միմյանց, տալով հերոսի հոգու ամբողջ գամման, զգայությունների ոչ միայն երանգապնակը, այլև՝ կիսատոները, նրբերանգները, որոնցով էլ հաճախ միմյանցից տարբերվում են գրողի երկերը։ Սա ենթադրում է որոշ կրկնություններ, որոնք, սակայն, չեն դառնում ձանձրալի, քանի որ Շուշանյանն ամեն անգամ կարողանում է լուսավորել հոգու նոր անկյուններ։ Ասես ամեն մի երկ դառնում է մի վրձնահարված, որով մի նոր քայլ է արվում այդ հոգու պատմությունը ամբողջացնելու, անցյալի հուշերով ապրող ու ներկայից հիասթափված սփյուռքահայի դիմանկարը կերտելու ուղղությամբ։

Շուշանյանի ստեղծագործության մեջ արտացոլված ժամանակը այնքան բարդ ու հակասական էր, որ բնականաբար, նույնքան բարդ ու հակասական պիտի լիներ նաև այդ ժամանակը վերապրող հերոսի հոգին։ Եվ եթե փորձենք հետևել այդ հոգու պատմությանը, ապա կտեսնենք գրողի ստեղծագործության մի նոր առանձնահատկությունը՝ հերոսի ներքին կոնֆլիկտը, որը ներքին սյուժեի զարգացման արդյունք է։ Պետք է, ասել, որ հերոսի ներքին.

5 Վ. Շուշանյան, Երկիր հիշատակաց, էջ 245։

հոգեկան պրոցեսները մեկուսացած չեն արտաքին աշխարհից։ Հոգեկան կոնֆլիկտը թեև տարբեր զգայությունների խաչաձևման ու բախման հետևանք է, բայց վերջին հաշվով՝ այդ զգայություններն առաջանում են դեպքերի, իրադարձությունների ազդեցությամբ։

Հերոսի հոգում հակադիր կողմերի՝ անցյալի ու ներկայի բախումն ու պայքարը հերոսի բնավորության ամբողջացմանը, նրա կերպավորմանը ծառայող գործոն են։ Հերոսն ասես կռվում է ինքն իր դեմ՝ չգայթակղվելու, պահելու համար իր բարոյական մաքրությունը եվրոպական մեծ քաղաքում, չրմանրանալու, չկորսվելու համար նրա լաբիրինթոսում։ Որը, բայց հպարտ հոգու այս չխոնարհվող համառությունը, անցյալի ջինջ հիշատակներին և հայրենի ոգուն հավատարիմ մնալու ներքին ճիգն է։ Անչափ հուզիչ է հիշատակների մաքրությամբ զինված որբի հոգեկան մաքառումը՝ չդավաճանելու համար իր էությանը։ Սա է հերոսի ներքին լարման ու պայքարի մի կողմը։

Եվ մի՞թե Շուշանյանի կյանքն էլ մի ներքին պայքար չէր, սեփական անձի մաքրագործում, որն, ի վերջո, նրան հասցրեց Սովետական Հայաստանի նկատմամբ ջերմ համակրանքի, կողմնորոշեց նրան դեպի մեր իրականությունը։ Կյանքի և ստեղծագործության այսքան խոր ու անմիջական մի այլ կապ դժվար է մատնանշել սփյուռքահայ գրականության մեջ։ Տեղին է ասված, թե «վերլուծել Շուշանյանի գրվածքները, նշանակում է քայլ առ քայլ հետևել Շուշանյանի իսկ կյանքին»[6]։

Հերոսի ներքին պառակտվածությունը վերաճում է բնավորության։ Դա սփյուռքի դրամատիկ հերոսն է, որ ո՛չ անցյալ կարող է վերադառնալ ռեալ կերպով, ո՛չ էլ հաշտվել ներկայի հետ և մնում է առկախ վիճակում, բեռնավորված անցյալի կորստյան ցավով ու կաշկանդված ներկայի անհեռանկարությունից։ Նա հիվանդ է ծննդավայրի, հարազատների կարոտից, և այդ բոլորը ետ բերելու անկարելիությունը ծնում է խռովք, պոռթկում ու գրեթե մանկական քեն՝ աշխարհի դեմ։ Սա էլ հերոսի հոգեկան կոնֆլիկտի, նրա ներքին լարման մյուս կարևոր կողմն է։

Սակայն ողբերգությունը չի շարացնում հերոսին։ Նա ոխ չի պահում աշխարհի ու մարդու դեմ և հաղթահարելով իր մեծ վիշտը, ուժ է գտնում իր մեջ և կարողանում է արցունքի միջից հավատով ու լավատեսորեն ժպտալ, ճչալ իր ցավը, բայց և չատել մարդուն.

Հավատացե՛ք, հակառակ ամբողջ այս գեշ տարիներուն,
. . . . . .
հակառակ կրած հարվածներուս,

Թերանս երբեք չէ աղտոտած
Հայհոյական կամ գեշ բառով մը...[7]

Շուշանյանի արձակն իրականության արտացոլման բնույթով թարմություն է ընդհանրապես հայ արձակում և մի շարք գծերով եզրեր է հայտաբերում ժամանակի եվրոպական արձակի, մասնավորապես XX դ. նշանավոր արձակագիրներից մեկի՝ Մարսել Պրուստի ստեղծագործության հետ։

---

6 Գ. Սևան, Վազգեն Շուշանյան, Երևան, 1968, էջ 21։
7 Վ. Շուշանյան, Երկիր հիշատակաց, էջ 396—397։

Չնայած բազում տարբերություններին, այնուամենայնիվ, անվիճելի է, որ և՛ Պրուստի, և՛ Շուշանյանի երկերում առկա է աշխարհը, ժամանակը «ներսից» բացելու միտումը։

Պրուստին հատուկ այս գիծը՝ «իրական աշխարհն ասես իր մեջ փոխագրելը»[8], ինչպես տեսանք, նաև Վ. Շուշանյանին է հատուկ։

Երկու գրողների ստեղծագործության մեջ էլ հիմնական տեղ է գրավում հուշը, հերոսը վերապրում է անցյալը։ Լունաչարսկու բառերով ասած՝ հուշը նրանց ստեղծագործության «հրապույրն ու էությունն է»[9]։

Գլխավոր հերոսի և հեղինակի միասնության, հուշերի մեջ ու նրանց միջոցով կերպարների ամբողջացման և մի շարք այլ գծերի նմանության մեջ են դրսևորվում Վ. Շուշանյանի ստեղծագործության աղերսները Մ. Պրուստի արձակի հետ։ Սակայն, այսուհանդերձ, Շուշանյանի ստեղծագործությունը բացառապես ինքնատիպ է, իր բոլոր հատկանիշների համադրությամբ ներկայացնելով զգալիորեն այլ տրակ։ Հատկանշական է, որ նրան խորթ են Մ. Պրուստի իդեալիզմը, հատկապես ենթագիտակցականի սկզբունքը և ֆրանսիացի գրողի մի շարք այլ անընդունելի կողմեր։ Դա պատահական չէ։ Եթե հիշենք, թե Շուշանյանն ինչպիսի սեր ուներ Ե. Զարենցի, Դոստոևսկու և այլ գրողների նկատմամբ, ապա հասկանալի կլինի, թե ինչու նրա արվեստը հիմնականում հեռու մնաց իր ժամանակի եվրոպական գրականության ծայրահեղություններից։

Վ. Շուշանյանի երկերում «կորուսյալ ժամանակների» վերադարձը բոլորովին այլ իմաստ ունի Մ. Պրուստի վիպական ցիկլի համեմատությամբ։ Այն առանձնահատկությունը, որ անցյալին անդրադառնալն ամենից առաջ հայրենասիրական խոր բովանդակություն է ձեռք բերում Շուշանյանի գործերում, հիմնականում պայմանավորված է իր ժողովրդի ճակատագրով։

НЕКОТОРЫЕ ОСОБЕННОСТИ ТВОРЧЕСТВА ВАЗГЕНА ШУШАНЯНА

Г. А. ГАЛСТЯН

Резюме

Творчество талантливого армянского писателя Вазгена Шушаняна, жившего и творившего во Франции, имеет ряд особенностей, благодаря которым оно занимает особое место в зарубежной армянской литературе.

Более того, манерой создания образа посредством воспоминаний и представления событий внешнего мира как процесса духовных переживаний героя Шушанян вносит новые черты в армянскую прозу вообще.

Хотя и творчество В. Шушаняна перекликается с творениями известного французского писателя Марселя Пруста, оно отличается глубокой самобытностью.

---

[8] «История французской литературы», т. 5, М., 1960, стр. 105.

[9] М. Пруст, В поисках за утраченным временем, т. I, 1934, стр. 9.